ՊԻՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

ԱԲՈՎՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ*

4

Ի՞նչ էր կատարվում իրականում. 40-ական թթ. սկզբներից Ռուսաստանի և Անգլիայի միջև սկսվել էին գաղտնի բանակցություններ՝ Օսմանյան կայսրության տարածքն իրենց միջև բաժանելու համար: Քննարկվող հարցերի շուրջ վերջնական համաձայնության գալու նպատակով, Նիկոլայ I-ը մինչև իսկ պատրաստվում էր մեկնել Լոնդոն: Այդ առիթով Ռուս տերությունը կարիք ուներ նախապես պարզելու, թե ի՞նչ էին իրենցից ներկայացնում այն երկրները (մեծ մասամբ՝ պատմական Հայաստանի երբեմնի գավառները), որոնք անցնելու էին կայսրությանը, և ի՞նչ կյանք ու կենցաղ ունեին այնտեղ բնակվող ցեղերն ու ժողովուրդները: Այդ ամենը պարզելու համար՝ որոշվում է գիտական հատուկ արշավախումբ ուղարկել Հայաստան՝ բնապատմական և երկրաբանական հետազոտության ենթարկելու նրա ինչպես ռուսական, այնպես էլ պարսկական և թուրքական շրջանները՝ առայժմ ծավալվելով Արարատ լեռան շրջակայքում փռված գավառներում:

Արշավախմբի ղեկավարությունը վստահվում է Դորպատի համալսարանի պրոֆեսոր, փորձառու երկրաբան Հերման Աբիխին: Այդ «գաղտնախորհուրդ գիտարշավի»[25] հաջողությունն ապահովելու համար հրահանգներ են ուղարկվում Անդրկովկաս՝ կարգադրելով ամեն քայլում ընդառաջել գիտնականին և նրան գործակիցներ կարգել Հայաստանը շատ լավ ճանաչող և տեղական լեզուներն իմացող անձինք, առաջին հերթին՝ Խաչատուր Աբովյանին, որին անհապաղ ուղարկվում է պաշտոնական հրավեր: Նույն մտահոգությամբ՝ Ռուս տերությունը (հավանաբար՝ Ներքին գործերի նախարար Դ. Բլուդովը)[26] դիմում է նաև Ներսես Աշտարակեցու խորհրդին և օգնությանը: Այդ ընթացքում Աբովյանը ստանում է նաև կոմս Ա. Խ. Բենկենդորֆի հանձնարարությունը՝ շրջել քրդերի ու եզդիների բնակավայրերում և ուսումնասիրել նրանց պատմությունը, բարքերն ու սովորույթները, հավատալիքներն ու բնավորության գծերը, անգամ՝ բանահյուսությունը[27]:

Ներսես Աշտարակեցու նամակն այդ գիտարշավին էր վերաբերում: Լսելով Աբովյանի մասին (ամենայն հավանականությամբ՝ Ա. Հաքստհաուզենից), որ փոխադրվել է Երևան, նաև բավարարած լինելու համար անձամբ Աբիխին, նա հատուկ նամակով խնդրեց Աբովյանին ըստ ամենայնի աջակցելու գերման

---

* Սկիզբը տե՛ս հմր. հմր. Դ-Ե:

25 Աբովյանի քնորոշումն է, տե՛ս Ե VII, 80 և 93:

26 Տե՛ս Դ II, 177/«... համաձայն ցանկութեանց նախարարութեան...»:

27 Ա N° 23, էջ 39 /հմմտ. Ե VII, 151 և 194-195/:

գիտնականին: Նամակի սկիզբը պարտավորեցնող էր, կաթողիկոսական կոնդակներին բնորոշ հանդիսավոր և հարգալից խոսքերով. «Սիրեցելոյ իմոյ՝ բարեջանութեամբ Ձեր ջատագովեալ վայելչութեան հայրենեաց Խաչատուր Յովակիմեան /"/, հարազատի Ամենասուրբ Առաքելական Եկեղեցւոյ Հայոց ջերմեռանդութեան հոգւոյ...», միաժամանակ, կարծես, ներողամտություն հայցելով, որ ցարդ անպատասխան է թողել նրա վերջին նամակը. «Զպարտաւորութիւն իմ միոյ գրութեանց Ձերոց առ իս, որպէս կարողանամ զմտաւ ածել՝ թերևս, անդուստ ի Ս. Պ. Բուրգայ, յարատևէ ցարդ և տևեսցէ դարձեալ...»[28]:

Խոսքը ի՞նչ նամակի մասին է, դժվարանում ենք կռահել, որովհետև Պետերբուրգից Ներսես Աշտարակեցուն գրած Աբովյանի նամակ հայտնի չէ: Մեզ ծանոթ է, պահպանված կամ կորած, երեք նամակ. մեկն ուղարկված է Ալտ-Կուստհոֆ ագարակից, 1834 թ. հունիսի 10-ին, մյուսները՝ Մոսկվայից, 1836 թ. փետրվարին /չի պահպանվել/ և մարտին: Առաջինի մեջ Աբովյանը Ներսես Աշտարակեցու դատին է հանձնել իր ապագա լուսավորական-կրթական ծրագրերը, վերջինների մեջ, խորին ակնածանք ու ջերմ համակրանք արտահայտելով նրա անձի ու գործերի մասին, դառը խոսքեր ուղղել երախտամոռ ժամանակակիցների հասցեին. «Վիշտ անմխիթար տարածանի, ոհ, զոսկերոջս, մինչ զգամ, թէ ոչ ձեռն առաջնորդեսցէ զիս, որոյ ամենայն շարժուածք միմիայն զազգին ջանայր պատրաստել և հաստատել երջանկութիւն և բարօրութիւն: Ապերախտ Տփղիս և ժողովուրդ անզգայ, որ ոչ միայն զինքն զրկեաց ի բիւրազգի բարեաց, զորս հոգի ձեր մարդասէր ցանկայր տալ նմա, այլ և փակեաց, հեռացոյց զհովանին՝ ընդ որոյ թևովք պատանիք դեռահասակք կարէին զարգանալ և հասանել ցանկութեանց իւրոց. ընդէ՞ր բռնադատիմք այժմ վտարանդի շրջիլ աստ և անդ, վասն զի չիք՝ որ առաջնորդեսցէ զմեզ, չիք՝ որ բառնայ տկարութիւն մեր. ձեռն ի ձնոտի թափառիմք և որբացեալ կամք գլխովին ի քաղցր հորէ: Ուստի՞ այս վստահութիւն և ապերախտութիւն մարդկան, որք ջանան և տքնեն խախտել, խորտակել զգործս իւրեանց ժամանակցաց»[29]: Այս նամակին Ներսես Աշտարակեցին պատասխանել է, բայց ուրիշներին ուղղված նամակում, միջանկյալ տողերով: Նատ հնարավոր է, որ 1835 թ. հունվար-փետրվարին, մինչ Աբովյանը Պետերբուրգում հայ մեծահարուստներին և ռուս պետական ու գիտական նշանավոր անձանց ծանոթացնում էր իր ապագա լուսավորական գործունեության ծրագրերին, հետևանքների մասին ծանուցած լիներ նաև Ներսես Աշտարակեցուն: Բայց այդ նամակը չի պահպանվել:

Կարևոր է 1844 թ. հունվարի 25-ի կաթողիկոսական կոնդակի վերջին մասը, որ ամփոփում է Ներսես Աշտարակեցու բուն խնդրանքն ու հանձնարարությունը խ. Աբովյանին. «...խնդրեմ ի ձէնջ, զի թէ իցէք ի սահմանի Արարատեան աշխարհի, ընդ ընկալնուլդ զսոյն գիր ոչ խնայելով զաշխատութիւն ձեր գնասջիք առ յիշեալ գիտնական եկաւորսն և լուեալ արժանապէս ի նոցունց զնոցայն հաճոյական յաղագս օժանդակութեան իւրեանց զամենայն զկարևորն ձեր և բարձր սրբազնութեան նախապատիւ ատենակալի Սինոդի Էջմիածնի, առանց

---

28 Ա N° 304, /հմմտ. Դ I, 217/:

29 Ա N° 125, էջ 1 /հմմտ. Պ. Հակոբյան, Խաչատուր Աբովյան. կյանքը, գործը, ժամանակը, Ե., 1967, էջ 697-698/:

զանցառութեան հոգ կալցիք միաբան գործակցութեամբ գտանել ասպնջական նոցա ընդ ամենայն ձերոց կարողութեանց այնպէս, զի ունիցին նոքա զլիով չափ բաւականութիւն իւրեանց յաղագս ձերոց մարդկային և քրիստոնէական կարեկցութեամբ լինելոյն օգնական ինքեանց, առ որ ես ինքնին համոզեցայց զիս պարտաւոր ձերում բարեջանութեանց»[30]: Բայց Ներսես Աշտարակեցու տողերն Աբովյանին են հասնում միայն ապրիլի կեսերին, Թիֆլիսում:

Զբավականանալով դրանով՝ նույն օրն արձակած մեկ այլ կոնդակով Կաթողիկոսը հանձնարարում է Սինոդի ատենապետ Բարսեղ Կեսարացուն՝ ծանուցել յուր կամքն Աբովյանին և տեղեկանալ նրանից, թե Աբիխն արդյոք չի՞ ժամանել Հայաստան, և ի՞նչ հետևանք ունեցավ իր խնդիրքը: Այնուհետև հանգամանալից հրահանգներ տալով վերջինիս, թե Մայր Աթոռի հոգևորականությունը գործնական ինչպիսի՞ օգնություն և աջակցություն պիտի ցույց տա Աբիխի գլխավորած արշավախմբին, նրան ուղարկելով նաև Աբովյանին գրած իր նամակը՝ հասցեատիրոջն հանձնելու համար, Ներսես Աշտարակեցին ավելացնում է. «Գրեցի ընդ այսմ և առ Ապովեան՝ ծանօթն և շնորհապարտն մարդասիրութեանց գերմանացւոց, զորմէ լուայ եկեալ այդր յիւր Հայրենիս, որ եթէ իրաւի ունիցի գտանիլ յԵրևան կամ ի հայրենի գեղջ իւրեանց, զգիր իմ առաքել առ նա, կոչեսցէս և զինքն ի տեսութիւն այդմ գիտնական հիւրոց հայրենեաց Հայաստանի»[31]:

Հենց նույն օրը, սակայն, մինչ Աբիխն այցելում է Ներսես Աշտարակեցուն՝ ստանալու համար նրա հանձնարարական մյուս նամակները զանազան անձանց, Կաթողիկոսին տանը չի գտնում, իսկ սպասավորը սխալմամբ նրան է հանձնում նաև Աբովյանին ուղղված նամակը, որն իրականում ուղարկվելու էր Էջմիածին: Տուն վերադառնալով և նկատելով սխալը, Վեհափառն անհապաղ գրում է իր երկրորդ կոնդակը Բարսեղ արքեպիսկոպոսին՝ տալով այդ առթիվ նոր հրահանգ. «... Ի 25 ամսոյս յաղագս Աբիխ անուն ուսումնականի ուրումն, որ առաքեցաւ Կայսերական հրամանաւ այդր յԱրարատ և ի սահմանակից գաւառսն ընդ պօրուճիկ լեռնական ինժեներ Սոկուլովի, գրեալ զյանձնարարութիւն առ ձեզ վասն ամենայն կարողութեամբ ձեր օժանդակելոյ նոցա, հարկաւոր համարեալ գրեցի և առ վարժապետ Խաչատուր Ապովեան հարազատն մեր, որ գիտակ է որպէս բազում հանգամանաց դաշտաց և լերանց Արարատայ, մանաւանդ լերինն Մասեաց՝ այնպէս և լեզուի նոցա և զերկոցուն գրեալ իմ զծրարսն եդի ի վերայ սեղանոյ, զի ի ժամանակի եղեալ ի ծրարի առ ձեզ գրութեան իմոյ զծրարն գրեցելումն առ Ապովեանն յանձնեսցուք խնդրողացն զայնս: Այլ առանց մեզ կնքեալ զայնս ջոկ-ջոկ տուեալ են նոցա, յաղագս որոյ յանձն առնեմ ձեզ, զի յստանալն ձեր զգրեալն իմ առ ձեզ, հարցջիք և վասն գրեցելումն առ Ապովեանն, և եթէ չիցեն պատահաբար հանդիպեալ նմա և տուեալ զգիր իմ առ նա, դուք ընկալեալ զայն, հասուսջիք նմա, եթէ իցէ այդր յԵրևան, և կոչեալ զնա պարտաւորեսջիք լինիլ օժանդակ նոցա ըստ ամենից կարևորացն ինքեան, որպէս մարդկային մարդասիրութեանց...»[32]:

---

30 Ա N° 304 /հմմտ. Դ I, 217-218/:

31 Մատենադարան, ԿԴ N° 110/138, թ. 1ա /սևագիր/:

32 Ն. տ., N° 110/141, թ. 1ա, բնագիր /հմմտ. «Գիտական նյութերի ժողովածու», N° 1 Ե., 1941, էջ 193-194 և Դ II, 280/:

Ստանալով կաթողիկոսական կոնդակը և կատարելով հանձնարարությունը՝ փետրվարի 20-ին Բարսեղ արքեպիսկոպոսը պատասխանում էր Ներսես Աշտարակեցուն. «Մեծաւ յարգանօք ընկալայ զկոնդակ վեհափառութեան Ձերոյ. արձակեալն առ իս 25 յունվարի անցելոյ, համար 25 և իսկոյն թղթակցեալ ընդ պարոն Աբովեանին ի մասին գիտնական առն Աբիխ անուանելոյ. որ ունի գալ յայսոսիկ կողմունս, ստացայ ի նմանէ զպատասխանի թէ՝ նա տակաւին չէ եկեալ յԵրևան»[33]:

5

Աբիխի և Աբովյանի շրջագայությունների ողջ անցուդարձերը 1844 թ. ապրիլից սեպտեմբեր ընկած ժամանակամիջոցում արդեն ծանոթ են մասամբ «Խաչատուր Աբովյանի դիվանի» երկու հատորներում Ե. Շահազիզի հրատարակած պաշտոնական վավերագրերից, մասամբ էլ՝ Աբիխի «Կովկասյան երկրներից» խորագրով ճամփորդական նամակների հատորներից՝ լույս տեսած Վիեննայում, 1896 թ., ուստի հարկ չենք համարում վերակրկնել: Հայաստանի երկրաբանական հետազոտության համար այն, հիրավի, հույժ շահեկան եղավ, բայց անձամբ Աբովյանին, նոր դառնություններից բացի, այլ բան չպարգևեց:

Անհաջողություններն սկսվեցին մասնավորապես դպրոցական կյանքում. աշակերտների մի մասը, մնալով առանց տեսչի հսկողության, ցրվեց, իսկ դպրոցամերձ այգին գրեթե չորացավ: Երևանցիներն հիմա էլ սկսեցին չարախոսել Աբովյանին, թե նա իր հաճույքի համար շրջագայում է այս ու այն կողմ՝ մոռանալով դպրոցն ու իր անմիջական պարտականությունները... մարդկանց նախկին հավատն արդեն դժվար էր վերականգնել: Աբովյանի հոգեվիճակն այնպիսին էր, որ չէր տրամադրվում ստեղծագործելու:

1845 թ. առաջին ամիսներին միայն Աբովյանը կարողացավ փոքր-ինչ վերագտնել իրեն և պատասխան նամակ ուղղել Ներսես Աշտարակեցուն՝ ինչպես նրա հանձնարարությունը բարեխղճորեն կատարած լինելու առթիվ լուր տալու, այնպես էլ հոգում բույն դրած անսփոփ ցավերի մասին անկեղծորեն խոսելու համար: Նամակի առաջին մասն Աբիխի ուղևորությանն է վերաբերում, որին աջակցություն ցույց տալու համար, ինչպես իր տեղում ասել ենք, Ներսես Աշտարակեցին նախ՝ 1844 թ. հունվարի 25-ին, հատուկ կոնդակով, ու հետո էլ՝ երկիցս, ուրիշների միջոցով դիմել էր Աբովյանին: Եվ վերջինս հիմա, Վեհի հանձնարարությունը կատարած լինելու առթիվ ուշացած, բայց դրական լուր տալու ցանկությամբ առաջնորդվելով և ընդհանուր խոսքերով միայն անդրադառնալով անձամբ իր թափած ջանքերին («...յապրիլէ սկսեալ մինչև ցսկիզբն նոյեմբերի[34]... տարագրեալ եղէ ընդ նմա ոչ միայն ի մեր սահմանս, այլև արտաքոյ նորա ի գաւառսն Մակուայ և Բայազիտայ...»), նկարագրում է հայոց ընդառաջումներն Աբիխին այն բոլոր վայրերում, ուր արդեն հասել էր Ներսես

---

33 Ն. տ., N° 112/575, էջ 29 և N° 110/20, թ. 1ա, սևագիր /հմմտ. «Գիտական նյութերի ժողովածու», N° 1, էջ 194 և Դ II, 280/:

34 Այստեղ անուշադրության սխալ է սպրդել. Աբովյանն իր ուղևորությունները Աբիխի հետ դադարեցրել է սեպտեմբերի 15-ից:

Աշտարակեցու (որին ինքը պատվում էր «Հայաստանյայց հույս» տիտղոսով) «տիրահրավեր շունչը» կամ կոչը:

«Պատիւ, յարգանք, ընդունելութիւնք և յօժարակամ պատրաստութիւն մերազնեայց՝ ի մեծէ սկսեալ մինչև ցփոքունս և ամենայն ուրեք... անցին զանձին անդր քան զչափն... Եւ ոչ մի գիտնական ճանապարհորդ նախ քան զսա եգիտ և գտցէ զայսօրինակ եռանդափոյթ ջերմեռանդութիւն ի կատարումն կամաց իւրոց»: Քանի որ անձամբ շատ էր դառնացած Աբիխից, Աբովյանը չի կարողանում քողարկել վիրավորանքը և պարբերությունն եզրափակում է մի տարակուսական հարցմունքով. «Բայց ծանիցէ՞ և խոստովանեսցի՞ նա ինքն զայս ամենայն, Աստուծոյ միայն և նմա է գիտելի. մեք զմերովսանն նմա ցուցանել ծառայութիւն ոչ անգամ և ոչինչ իրս զանց արարաք»[35]:

Թեպետև օտարի մասին, բայց այս խոսքերի մեջ կա որոշակի տագնապ, հար ու նման հայության տագնապալից իրավիճակի և անհետաձգելի լուծում պահանջող այն բազում խնդիրների, որոնք ճակատագրական նշանակություն ունեին իր ապագայի համար, և, ըստ երևույթին, նրանց հարկադրանքով է, որ հիմա գրիչ էր առել ձեռքը:

Աբովյանը, սակայն, նորից մի կողմ է թողնում անձամբ իրեն վերաբերող հարցերը, որոնց տնօրինությունը կախված էր միայն ու միայն Ներսես Աշտարակեցուց, և մի կերպ զսպելով իրեն՝ տրտմաթախիծ ոճով ազգի իրական վիճակն է ստորագրում, դրանով իսկ փութացնելով Վեհափառի վերադարձը Մայր Աթոռ, որովհետև իսկական հոգևոր մխիթարության և նյութական ու բարոյական աջակցության կարիք ուներ ողջ հայ ժողովուրդը: Նարեկացու հանճարեղ գրչի հետ մրցող տողեր են, որ կարդում ենք այնուհետև. «Հօտ առանց հովուի, որդիք առանց վերատեսչութեան, տուն առանց խնամակալու հոգաբարձուի, ախտք և ապականութիւնք, կեր և յափշտակութիւն ամենայն ուրեք մաշէ և կեղեքէ զազգն ողորմելի: Կուրութիւն հոգւոյ, տգիտութիւն մտաց կապեալ կաշկանդեալ ունի զամենայն սիրտ...»:

Գրելով այսպես՝ Աբովյանը միայն իր կարծիքը չէ, որ հաղորդում է Վեհին: Աբովյանի պես էին մտածում շատ-շատերը, որոնց անկեղծ համոզմամբ՝ այս «անբուժելի վշտերի» փարատողը միայն ու միայն Ներսես Աշտարակեցին կարող է լինել: Հետևաբար իր և համախորհուրդ մյուս հայրենասերների անունից խոստանում է ամեն կարգի աջակցություն, միայն թե Վեհը օր առաջ ժամանի Մայր Աթոռ և իր ձեռքն առնի ազգային Եկեղեցու ղեկը. «Կեանք մեր զոհ լիցին սուրբ և ազգասէր կամաց Ձերդ Վեհափառութեան...»,– հավաստիացնում է Աբովյանը:

Որպեսզի ընդվայր չհնչեին իր տագնապալի կանչերը, նա վճռում է աղաղակող փաստեր ևս բերել՝ Կաթողիկոսի ուշադրությունը հրավիրելով նախ քանաքեռցի Մարիամի /Մայրանի/ ողբալի բախտի վրա, որի վիճակը

---

35 Ե X, 267: Նամակի բնագիրը տակավին չի հայտնաբերված: Օգտագործել ենք Ա.Երիցյանցի համար կատարած զույգ արտագրությունները /Մատենադարան, Երից. N° . 148/234/, մի երրորդը՝ Աբովյանի դիվանում /Ա N° 189/, որոնք կատարված են 1870-ական թթ., և առաջին հրատարակությունը՝ «Փորձ», 1880, N° 8-9, էջ 194-198:

թեթևացնելու համար իր և ուրիշների մինչ այդ ձեռնարկած քայլերը ձախողվել էին հոգևոր պետերի անհոգության պատճառով: Անհայր, անմայր և անազգական այս որբի ճակատագիրը չէր հուզել մեր «մարդասեր հոգևորականներին», մինչդեռ քարերն անգամ աղաղակում էին նրա անմեղության մասին՝ պահանջելով ազատություն այն բռնությունից, որ պարտադրվել էր անգթորեն. «Բռնի քարշի ողորմելին յեկեղեցին, նովին բռնահարութեամբ կարդան ի վերայ նորա զկարգ ամուսնութեան յարգոյ մեր քահանայք, բայց հազիւ աւարտեալ զայն, խղճահար հարսն՝ իբրև այսահար ոք՝ փախուստ առեալ անտի՝ դիմէ ի տուն հօրաքեռ իւրոյ, սպառնալ սրախողխող զինքն առնել և ո՛չ տայ զանձն և զանմեղութիւն ի ձեռս առն այնպիսւոյ, զոր ինքն ո՛չ կամի»[36]:

Փախած ամուսնուց՝ խելագարված Մարիամն այնուհետև ամբողջ չորս տարի թափառում է Քանաքեռի ձորերում, գիշերում քարանձավներում, պատառոտված շորերով և քաղցած: Կարծես նրա մասին են պատմում Թումանյանի նույնանուն պոեմի տողերը.

Ու հալածված իր հորից,
Փախած չոբան Կարոյից,
Սոված, պատռած շորերով,
Կորչում էր նա օրերով:
Կուչ էր գալի խըղճալի
Օջախի շուրջ օտարի
Կամ թափառում մեն-մենակ
Մեր հանդերում շարունակ[37]:

Բանասերների վկայությամբ՝ Թումանյանի պոեմի հերոսուհու նախատիպը ոմն զուտնաչի Սաքոյի աղջիկն է[38], բայց չի բացառվում, որ բանաստեղծը ծանոթ լիներ նաև Աբովյանի սույն նամակին և իր երկը ստեղծելիս ինչ-ինչ ազդակներ առներ դրանից, մանավանդ որ նամակը հրատարակված էր «Փորձ» ամսագրում, իսկ Թումանյանն այն կարդում էր:

Մարիամի ողբերգությունը սկսվում է 1828 թ., երբ նա հազիվ ինը տարեկան էր, իսկ բռնացող քահանան՝ քանաքեռցի Տեր Մարգարը[39]: Թշվառ ազգականուհուն խորապես կարեկցելով, վերջապես կարողանում է գյուղ տանել և իրենց տանը պահել Աբովյանի մայրը: Աղջիկն աստիճանաբար վերագտնում է իրեն: Երբեմնի փեսան Մարիամի խելագարության դեռ առաջին ամիսներին լքել էր նրան, ամուսնացել երկրորդ անգամ և ուներ երեխաներ, հոգևորականներն օրհնել էին նրա պսակը, բայց անչափահաս հարսին ոչ մի կերպ չէին ուզում ապահարզան տալ:

Աբովյանի եռանդուն միջամտությամբ նրա հարցը 1838 թ. սկսած դառնում է հոգևոր ատյանների քննության առարկա, բայց զանազան անիմաստ պատճառաբանություններով և՛ Երևանի հոգևոր իրավարանը, և՛ Էջմիածնի Սինոդը

---

36 Ե X, 268:

37 Հ. Թումանյան. Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Ե., 1989, էջ 12-13:

38 Տե՛ս նշ. տ., էջ 497:

39 Տե՛ս Մատենադարան, ԿԴ հմր. 118/389, թ. 128:

ձգձգում են գործը՝ վերջնական լուծումը թողնելով նոր Կաթողիկոսի՝ Ներսես Աշտարակեցու հայեցողությանը, հետևաբար Աբովյանը սույն նամակում նրա գութն ու արդար վճիռն է խնդրում. «Մարթէ՞ արդեօք մինչև ցայս վայր անգամ քակել զսիրտ մարդկային և զօրէնս աստուածային, անդ՝ ուր քարինքն ևս աղաղակեն զանմեղութիւն և գոչեն մարդասիրութիւն, այլ ամենագութ արդարադատութիւն Վեհափառ եպիսկոպոսապետիդ՝ քաջալոյս եմ, փութով հնարեսցէ և հրամայեսցէ ի բաց ընկենուլ զայս անլուր բռնութիւն և տալ զազատութիւն կապելոյն յանգութ ձեռաց»[40]:

Հիշո՞ւմ էր արդյոք Աբովյանն ավելի քան ութ տարի առաջ, մինչ Նոր Նախիջևանում էր գտնվում, այնտեղի հասարակությանը հուզող նմանօրինակ դիպվածը, որին ինքն էլ փորձեց միջամտել, սակայն դարձավ ստոր բամբասանքի առարկա և հազիվհազ կարողացավ վերագտնել իրեն: Աբովյանն այնտեղ ծանոթացավ Ալեքսան քահանա Մաթևոսյանի դստեր հետ, որին երկու տարի առաջ իր երբեմնի բարեկամները՝ Սիմեոն արքեպիսկոպոս Բզնունյանցն ու Խաչատուր Խումաճյանը, հակառակ աղջկա ու նրա ծնողների ցանկության, բռնի նշանել էին Տեր Սիմեոն քահանայի որդու հետ և շտապում էին քաղաքապետարանի օժանդակությամբ պսակել: Աղջկա ծնողներն օգնություն ու ազատություն են խնդրում թեմական առաջնորդ Ներսես Աշտարակեցուց, սակայն վերջինս այդ ամենը համարելով Գաբրիել Պատկանյանի բանսարկությունների արդյունք՝ մերժողական պատասխան է տալիս: Մայրը մինչև իսկ դիմում է Ռուսիայի ներքին գործերի նախարարի օգնությանը, սակայն այստեղ էլ Ներսես Աշտարակեցու հեղինակավոր խոսքը վերստին կասեցնում է դրական վճիռը: Շրջանցելով թեմական առաջնորդին՝ Աբովյանը որոշում է դատական քննության առարկա դարձնել հարցը և 1836 թ. մայիսի կեսերին օրիորդի անունից հատուկ խնդրագրով դիմում է Նոր Նախիջևանի հոգևոր դատարանին՝ վերջինիս ուշադրությունը հրավիրելով կնոջ իրավունքների և ամուսնական փոխհարաբերությունների վրա, որոնք չէր կարելի անտեսել նման նուրբ խնդիրը քննելիս և վերջնական որոշում կայացնելիս. «Սէրն է ամուսնութեան առաջին և հարկաւորագոյն նպատակն... Կենաց երջանիկ ժամանակն... ի յամուսնութենէ սկսանի առաջ գալ... Կարե՞ն յայնպիսի ծնողաց զարգանալ զաւակք բարեսնունդք՝ որք ինքեանք երկպառակութեամբ և անմիաբանութեամբ բնակին...»[41]: Բայց դատարանն ևս չի համարձակվում շեղվել Ներսես Աշտարակեցու վճռից: Դառնացած ու ծանր հոգով՝ Աբովյանն այն ժամանակ թողնում է Նոր Նախիջևանը... Իսկ հիմա նույնպիսի հարցով ուզում էր փոխել Ներսես Աշտարակեցու քարացած կարծիքը պսակի սրբության և ապահարզանի վերաբերյալ, մանավանդ որ կատարվածն անարդար էր չափից ավելի և, հիրավի, աղաղակող:

Մարիամի հարցը, սակայն, որի բարեդեպ լուծումը թվում էր անտարակուսելի, լոկ փոքր մասն էր այն մեծ հոգսերի ու տառապանքների, որոնք ալեկոծում էին Աբովյանի հոգին: Նրա բուն ասելիքը հետո է սկսվում: Տագնապալի, անորոշ ու անհավոր էր հենց իր վիճակը: Խոսքերը, որ կարդում ենք այնուհետև, Աբովյանի

---

40 Ե X, 268:

41 Ա N° 590 /հմմտ. Դ II, 12/: Մատենադարան, ՆԱ N° 167 ա/1084, թթ. 30ա, 31ա, 32բ:

գրական ժառանգության ամենացնցող տողերն են՝ գրված բորբոքուն երևակայությամբ և սրտի արյունով. անցքերը, որոնց վրա հրավիրում է հասցեատիրոջ ուշադրությունը՝ Աբովյանի կյանքի ամենաողբերգական դրվագները: Կենաց ու մահվան անլուծելի հարցի առջև էր կանգնած նա, մինչ պատմում էր իր գիտակցական ողջ կյանքի իմաստը դարձած պատրանքների խորտակման մասին, պատրանքներ ու վեհ նպատակներ, որոնք ինչ-որ չափով կարելի էր կենդանի իրականություն դարձնել, եթե հիմա Ներսես Աշտարակեցին բռներ նրա ձեռքից և հասցներ այն ճանապարհին, որով կարելի էր առանց լուրջ խոչընդոտների աստիճանաբար դնել ազգային լուսավորության տաճարի հիմքերը: Հետևենք նամակի շարադրությանը:

Ի՞նչի համար էր Աբովյանը ծանրագույն զոհողությունների գնով օտար աշխարհներ ընկել և ազգին ու հայրենիքին պիտանի դառնալու նպատակով կրթվել ու լուսավորվել և ի՞նչ ընդունելության արժանացավ Դորպատից վերադառնալուց հետո մայր հայրենիքում, հայոց հոգևորականության կողմից: Աբովյանի գիտելիքների ու բարոյականության մասին Ռուս տերության հեղինակավոր անձանց լավագույն հանձնարարականները այն ժամանակների Կաթողիկոս Հովհաննես Կարբեցին ընկալելով որպես պարտադրանք և հրաման՝ նրան որակեց հավատից շեղված և լյութերական ու մերժեց գործունեության ասպարեզ տրամադրել վանական և հոգևոր դպրոցներում: Միայն սովից չմեռնելու համար, հարկադրված, Աբովյանն աշխատանքի անցավ արքունի ուսումնարանում, հետո ամուսնացավ, երեխաներ ունեցավ, որպիսի վիճակ բնավ չէր ենթադրում:

Մի կարճատև լուսավոր պահ այնուամենայնիվ ապրեց Աբովյանը հետդորպատյան վեցամյա տարիներին. հիմնեց իր մասնավոր դպրոցը՝ գաղափարակիցներ ու գործակիցներ պատրաստելու համար, բայց նրան սկսեցին խանգարել ու հալածել պետական ծառայության մեջ անգամ՝ հարկադրելով փակել մասնավոր դպրոցը. «Աստի ևս նախանձ և չարակամութիւն իմոցս պաշտօնակցաց գրկեալ զիս բռնի յորդեգրաց իմոց՝ պատճառ եղեն ինձ թողուլ զՏփխիս և հեռանալ աստ, ուր այժմ եմն ես՝ վշտագնեալ հոգւով ի վերջին յուսահատութեան»,-գրում է Աբովյանը[42]:

Հուսահատության պատճառն, անշուշտ, նյութական ապահովության բացակայությունը չէր, ոչ էլ փառք ու պատվից զրկվելը, որոնց թվում է, թե ձգտում էր նա, այլ հայրենիքի վիճակը և իր անկարողությունը՝ օգնելու, ուստի դառնացած հոգով պատմում էր Ներսես Աշտարակեցուն. «...աւուրք իմ անցանին ընդվայր, զօրութիւն իմ սպառի, յապաղի օր ըստ օրէ, միտք իմ գլանայ, ցանկութիւնք իմ մեռանին, տեսանեմ զտարաբախտ վիճակ Հայրենեաց և չունիմ հնար և միջոց օգնել նմա իւիք, որ էր առաջին և վերջին նպատակ կենաց իմոց: Վաղուց մտադրեալ էր իմ տեղափոխ լինել աստի իսպառ և գնալ կամ ի Ռուսաստան, կամ ի Գերմանիայ, այլ աւետալուր համբաւ գալստեան սրբազնասուրբ օծութեան Ձերոյ կապէ, կաշկանդէ զիս մինչև ցարդ քաղցրագինն յուսոյ և սիրոյ կապանօք յապագայ բարիս: Զի՞նչ օգուտ ինձ փառքն և պատիւ

---

42 Ե Հ, 269:

այլ ուրեք... բաց է ինձ ճանապարհ ամենայն ուրեք, ուր յօժարիցիմն ծառայել, այլ մի՞թէ վասն ծառայութեան և աստիճանի տանջեցայ ցայս վայր»[43]:

Որովհետև Ներսես Աշտարակեցուն վաղուց ծանոթ էր Աբովյանի «սրտի ներքին գաղտնիքը», բուն նպատակը, ուստի, ինչպես գրում է այնուհետև, նրա գալստյանն էր սպասում, որպեսզի ցանկալի փոխըմբռնման դեպքում, արդեն նոր ասպարեզում, նվիրվեր դրանց իրականացմանը: Անժխտելի ճշմարտություն է, որ ազգի հիմնավոր հոգևոր կրթության միակ հույսը հոգևորականությունն է, և սա նաև Աբովյանի աներեր համոզումն էր. հայ ժողովուրդը, սակայն, չուներ այդ մեծախորհուրդ նպատակի համար քիչ թե շատ պիտանի անձինք, իսկ ինքն էլ, որ պատրաստ էր կյանքը զոհելու հանուն դրա, արդեն վտարված էր Էջմիածնի միաբանությունից: Աբովյանն այժմ աշխարհական էր, բայց և զուրկ՝ ընտանեկան քաղցրությունը վայելելուց, որովհետև դրժել էր մանկության տարիների ուխտը և հեռացել հոգևոր ասպարեզից՝ դրանով իսկ կորցնելով վստահությունը և սահմանափակելով գործունեության շրջանակները.

«Այս անբուժելի ցաւ սրտիս, որ և պատճառ լիցի մահուան իմում, խափանեալ և խանգարեալ ունի զամենայն զօրութիւն իմ: Աշխարհ ամենայն մեռեալ է յաչս իմ: Չիք իմ այլ կեանք, քան բարեբախտութիւն Հայրենեաց: Պահանջեսցէ ոք զկեանս իմ ի պատարագ նմա, պատրաստ եմ և զայն ընծայել ի զոհ»: Հետևաբար, պաղատագին աղերսում էր Ներսես Աշտարակեցուն՝ փրկել իրեն կործանումից. «Արարէք զիս շիւղ ոտից Ձերոց, վսեմափառագոյն եպիսկոպոսապետ: Եթէ օրէնք ի ձեռս առաջնորդաց են, քանի՞ ևս ի ձեռս եպիսկոպոսապետաց և առաջնորդապետաց: Ձեմ ես առաջին օրինակ միայն՝ որ ցանկայ թողուլ զտուն և զգաւակունս և բառնալ զխաչ Քրիստոսի, կամիմ, պատրաստ եմ հոգւով և մարմնով և խաչ ելանել ի սիրոյ առ Հայրենիս: Ձեռ այս ցնորք տղայական, այլ հաստատ յօժարութիւն և փափագ առն կատարելոյ: Մինչև ի բազմարդիւն աշխարհագով վսեմագործութեանց Ձերոյ եղիցի՝ դարձուցանել զիս յառաջին վիճակ իմ, յորում միայն յուսամ կատարելագործել զամենայն փափագ սրտիս»[44]: Աբովյանը լիահույս էր, որ եթե Ներսես Աշտարակեցին ընդառաջեր իրեն և վերադարձներ նախկին վիճակին, իր հետևից հոգևոր սքեմ պիտի առնեին նաև իր աշակերտներից շատերը՝ սկիզբ դնելով «Հայաստանի Նոր Ոսկեդարի»:

Աբովյանի նամակը Ներսես Աշտարակեցու ձեռքը հասավ 1845 թ. մարտի 28-ին, Քիշնևում, և չենք տարակուսում, որ լուրջ մտահոգություններ պատճառեց Վեհափառին: Պատասխան գրելը միանգամից չհաջողվեց, անհրաժեշտ էր լրջորեն քննել Աբովյանի առաջադրած հարցերը, որի համար ժամանակ էր պետք: Բայց այդ ընթացքում նամակը խառնվելով ուրիշ թղթերի՝ անհետացավ նրա տեսադաշտից ու մոռացվեց և լոթ ամիս հետո միայն, հոկտեմբերի 14-ին, արդեն Նոր Նախիջևանում, անակնկալ դուրս եկավ ուրիշ թղթերի միջից: Ներսես Աշտարակեցին սկսում է գրել պատասխանը և հոկտեմբերի 15-ին ավարտում, բայց դեռ չծրարած՝ նամակը նորից է անհետանում և տասն օր հետո կրկին

---

43 Ն. տ., 269:

44 Ն. տ., 269-270:

մեջտեղ գալիս՝ այս անգամ պարտադրելով առանց ուշացնելու փոխել ամսաթիվը և առաքել հասցեատիրոջը[45]:

Անցած ավելի քան ութ ամիսներին Աբովյանի կյանքում որևէ էական փոփոխություն չկատարվեց, նրա տառապանքներն ու վշտերը բնավ չամոքվեցին: Սկզբներում, դեռ երկար ժամանակ, նա սպասում էր պատասխանի, իսկ երբ այն ուշացավ, ենթադրեց, թե ավելորդ է այդքան կարևորագույն հարցերի համար արագ ու ցանկալի լուծում սպասելը և փորձեց գեթ դպրոցական առօրյայում լռեցնել ներքին տագնապները: Բայց նորից դառնություններ...

Անդրկովկասյան երկրամասի ուսումնական մասի կառավարիչը և դպրոցների վերատեսուչը սկսեցին պաշտոնական պարտականություններից շեղումներ ընկալել Աբովյանի գործունեության մեջ և տեղի-անտեղի վիրավորել նրա արժանապատվությունը: Դրան ավելացան դպրոցի շենքի հրդեհը, թուրք մոլլաների հետ գժտությունը, այնպես որ պատասխանի մասին մտածելու ժամանակ չէր մնում:

Ներսես Աշտարակեցու պատասխանը հոկտեմբերի 24-ին Նոր Նախիջևանից ուղարկվում է Տփղիս, վիրահայոց հոգևոր թեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունուն՝ Աբովյանին փոխանցելու համար: Նկատի առնելով Տփղիսի և Նոր Նախիջևանի միջև ընկած հեռավորությունը՝ մեր կարծիքով, արքեպիսկոպոսը Կաթողիկոսի ծրարը ստանալուց հետո, Աբովյանի նամակը շուրջ 20 օր դեռ պահում է իր մոտ և միայն նոյեմբերի 24-ին, կից գրությամբ, ուղարկում Երևան: Աբովյանն այն ստանում է երկու օր հետո, նոյեմբերի 26-ին[46]:

6

Աբովյանի հուզաշատ ու տագնապալի խոսքին Ներսես Աշտարակեցին հակադրում է անթաքույց համակրանքի ու հորդորական արտահայտություններ՝ գրված ճարտասանական նախանձելի վարպետությամբ, թեպետ վերջինները, ըստ էության, հուսադրող քիչ բան էին պարունակում: «Անձկութեամբ հոգւոյ» իր հնավանդ ողջույնը հղելով «յարմատոց բարեաց՝ շառաւիղ, բարեյոյսն» Խաչատուրին՝ Կաթողիկոսն Աբովյանի առաջադրած հարցերին պատասխանում է գրեթե նույն հերթականությամբ՝ անդրադառնալով նախ հոգևոր ու աշխարհիկ դասերի ողբալի վիճակին, որ քաջաձանոթ էր նաև իրեն և պակաս մտահոգություններ չէր պատճառել. «Վշտացոյց զգացումն իմ ո՛չ սակաւ յաղագս ցաւելի դրութեանց սրբութեան հայրենի եկեղեցւոյ և երկանց գերմաքուր մայրութեանց նորա հոգևորականաց և մարմնաւորականաց»[47],- գրում է նա:

---

45 Ա N° 305 /հմմտ. Դ II, 176-178/:

46 Ա N° 426 /հմմտ. Դ II, 178/ և Ա N° 305, թ. 2բ, մակագրություններ:

47 Այս և հետագա մեջբերումները կատարում ենք անմիջականորեն կաթողիկոսական կոնդակի /նամակի/ բնագրից՝ Ա N° 305: Տպագրության մեջ /տե՛ս. Դ II, 176-178/ առկա են չվերծանված բառեր, արտահայտություններ, տողեր և զանազան անճշտություններ:

Ներսես Աշտարակեցին այնուհետև իր կարծիքն է հայտնում Աբովյանի քեռու դստեր՝ Մարիամի հարցի վերաբերյալ՝ չթաքցնելով, ըստ այդմ, իր անկեղծ մտահոգությունը: Իր իսկ խոսքերով՝ յոթ ամիս շարունակ դժբախտ որբի ճակատագիրը զբաղեցրել է իր միտքը խորին կարեկցանքով: «Ոչ նուազ ևս քերեաց կարծրագոյն քերանօք զզգացումն իմ այն ի հնագոյն ժամանակաց զայրացեալ մինչև յոյժ խստատանջ նեղիչ մշտամրմունջ իմում կրից՝ միատարր յարատևութեամբ իբրև նախասահմանութեամբ իմն ընթացակից իմում մշտակոշկոճ կենաց տառապանք որբացեալ Մարիամ անուն կնոջ կամ աղջկանն քանաքեռցւոյ, զի ցայս վայր աւա 7-ն ամիս գտանի լինէն ևս զրկեալ յիւրոց այցելութեանց, ըստ նախագրեալ պատահմանցն»,-գրում է նա՝ խոստանալով Էջմիածին վերադառնալուց հետո վերջ դնել Մարիամի տառապանքներին և հուսադրելով մի փոքր էլ համբերել, «մինչև ժամանեսցուք մեք առաջնորդութեամբ Աստուծոյ ոչ ևս անագան»:

Նամակի երկրորդ մասն արդեն Աբովյանի բուն մտահոգություններին էր վերաբերում, նրա ապագային, որոնց նկատմամբ հայրապետական դրական կամ բացասական վճիռը կարող էր ինչպես գործունեության հզոր խթան դառնալ Աբովյանի համար և դրանով իսկ սկզբնավորել ազգային վերածնության նոր շարժումը, այնպես էլ վերջակետ դնել նրա անիմաստ գործունեությանը և դուռ բանալ այնպիսի տառապանքների, որոնց շատ շուտով պիտի հաջորդեր Աբովյանի լինել-չլինելու հարցը: Հետևաբար Ներսես Աշտարակեցին իր բառերն ընտրում է խիստ զգուշությամբ՝ խոսքն սկսելով Աբովյանի համար նվիրական ու պաշտելի պապից՝ երջանկահիշատակ Աբովից, որի նկատմամբ ինքը ևս շարունակում էր տածել խորին պատկառանք ու հարգանք՝ հավաստիացնելով մեկ անգամ ևս, որ նույն անկեղծ զգացմունքները տածում է նաև Աբովի թոռան՝ Խաչատուրի նկատմամբ դեռ մանուկ հասակից. «Բարելիշատակ այրն, երևելի, մեծապատիւ Աբով՝ մեծ հայր ձեր կամ պապ, գոլով վերապատուեալ առ կենդանութեանն յիմում համարման, ծանուցեալ եմ զձեզ որպէս թոռն նորա յօրէ ճանաչելոյ իմ զձեզ ի ձերում մանկական աշակերտութեան և ունիմ արդ ևս այնպէս»:

Կյանքն ու աշխարհը, սակայն, այլ են, ունեն իրենց օրենքները, մշտապես ենթարկում են մարդկանց փորձությունների ու տառապանքների՝ տակն ու վրա անելով ամեն ինչ: Դյուրին չէ դիմագրավել այդ ամենին և շարունակել նպատակադրյալ ընթացքը. «Այլ զի բնական է աշխարհի յիւրումն խարբալի խարբալեալ զամենեսին ոչ ըստ նոցայն հաճոյից, այնպէս ևս ի նմին խաբալի ուժգին հարուածովք յայս կոյս և յայն կոյս յարուածուօք կենօք գտեալ եմք մշտատագնապ և ունիմք նոյնպէս տագնապիլ և մեք, և դուք, և այլք առհասարակ, մեծամեծք և փոքունք, իմաստունք և տգէտք, առ որ աղաչանք Քրիստոսի առ իւր հայրն միայն ունին զօրել և ոչ պակասեցուցանել մեզ հաւատ յամենայն կեանս մեր»: Ուստի բնական ընթացքն ամեն ինչում Հավիտենականի տնօրինությանը և Արարչի կամքին ենթարկվելն է:

Աբովյանն իր նամակում ընդարձակորեն անդրադարձել էր նախկին Կաթողիկոս Հովհաննես Կարբեցու՝ իր նկատմամբ ցուցաբերած անարդար վերաբերմունքին՝ ընդմիշտ զրկելով իրեն էջմիածնական միջավայրում նոր հոգևորականության կրթությանն ու դաստիարակությանը նվիրելու հնարա-

վորությունից, մինչդեռ Աբովյանի դորպատյան ուսումնառության գլխավոր նպատակն այդ էր: Աբովյանը բառացի մեջ էր բերել Կարբեցու դաժան վճիռն ու պատասխանը. «Հրամանաւ գա՞ս ի վերայ իմ, վտարանդեալդ ի հաւատոյ. դու լաւ խմորել կարես զմիտս անմեղաց, այլ կրթել զնոսա չէ քո գործ»: Ներսես Աշտարակեցին լավ էր ըմբռնում դրա հետևանքները և այդ առումով Աբովյանի ապրած հոգեկան դրաման, սակայն, իբրև կաթողիկոս, այլ պատասխան չի գտնում, քան տրամաբանական զորությամբ հանգստացնել նրա խռովահույզ սիրտը: «Անունն ունի զձայն սոսկ և ո՛չ բնաւ զէութիւն իրին նշանակեցելոյ ինքեամբ».- ասում է նա: Հետևաբար որքան էլ մարդ անդրադառնա իր նկատմամբ այլոց գործադրած անարդարություններին, ոչ միայն ոչինչ չի շահի, այլև չի վերադարձնի անցյալն ու կորցրածը. «...զի թէ բիւր անգամ ասասցեն հաց կամ ջուր, ո՛չ երբէք յագեսցին քաղցեալք, և ո՛չ բնաւ զովասցին ծարաւիք»:

Քաջ իմանալով ազգային կյանքի և վանական միջավայրի հնարավորությունները՝ Ներսես Աշտարակեցին կարծես խուսափում է պատասխանել Աբովյանի առաջադրած վերջին ու գլխավոր հարցին՝ թույլատրել կրկին հոգևոր սքեմ առնելու և վանք վերադառնալու: Եզրափակիչ տողերի մեջ առկա «Ո՛չ գովեսցին գրեալքն՝ մտեալ յամուսնութիւն, վաղուց հրաժարեալ եմ... ցկատարելագործել զամենայն փափագ սրտի՞ն»» և այդ խոսքերին հաջորդող առաքելական պատվիրանն ու համապատասխան զգաստացնող խրատը՝ «Եթէ մոռացեալ իցէք կամ արտուղեալ, կարէք արծարծանել զգրեալն Անօթոյն ընտրութեան և դառնալ ի ձեր ուշ: Ունակութիւն առաքինական բարեպաշտ վարուց և անփոփոխ յայնս հաստատութիւն բարուց հզօրեղազէն զօրէն զանգակի հանդիսացուցանել ամենեցուն զկեանս» փաստորեն վկայում են, որ Կաթողիկոսն անուղղակիորեն համոզում էր Աբովյանին հլությամբ տանել ամուսնության լուծը և առմիշտ հրաժարվել աշխարհիկ կենցաղը փոխելու պատրանքներից:

Թույլ հույսերը և հարուցած հարցերից կարևորների մասին անորոշ, ավելի ճիշտ՝ մերժողական պատասխանները չէին կարող առիթ չդառնալ հոգեկան նոր տառապանքների: Ի՞նչ անել այժմ. բոլոր դռները, սակայն, դեռ չէին փակված, նամակով, թերևս, հնարավոր չեղավ իր բուն ցանկություններն, ինչպես հարկն է, հասկանալի դարձնել Կաթողիկոսին: Գուցե Մայր Աթոռ վերադառնալուց հետո անձամբ դեմ-դիմաց զրուցելով միմյանց հետ, կարելի՞ լիներ ըմբռնելի դարձնել Վեհին իր տագնապներն ու ձգտումները և ստանալ աջակցության ու հովանավորության հույս ու խոստում: Այդ չէր կարելի բացառել, ուստի Աբովյանը զինվում է համբերությամբ, և որովհետև Կաթողիկոսի վերադարձն ակնկալվում էր կես տարուց հետո միայն, օգտակար դարձնելու համար սպասումը՝ նվիրվում է դժվարին ու ծանր ստեղծագործական մի աշխատանքի:

Արդեն ասացինք, որ Ա. Խ. Բենկենդորֆը նախորդ տարիներին հանձնարարել էր իրեն պատմա-ազգագրական մի աշխատություն պատրաստել քրդերի ու եզիդիների մասին: Դրանից շատ չանցած, 1844 թ. սկզբներին վախճանվում է Բենկենդորֆը, բայց Աբովյանն իրեն ազատ չի զգում ստանձնած պարտականությունից. քրդերի ու եզիդիների՝ բնության այդ պարզ զավակների կենցաղը, հոգեբանությունն ու բանահյուսությունը գրավում էին իրեն ևս: Ռոմանտիզմի դարաշրջանի եվրոպական գրողները, գրեթե բոլորը, հմայված էին Արևելքով: Ռոմանտիկ Աբովյանն էլ իր արևելյան հրապուրանքները ջանում էր

գտնել քրդերի ու եզիդիների աշխարհում: Արևելցի, մասամբ մահմեդական, թե արևապաշտ խրոխտ ռազմիկները՝ քաջության ու արժանապատվության մասին իրենց ըմբռնումներով, գունագեղ տարազով սևաչյա աղջիկներն ու երիտասարդ կանայք՝ իրենց առօրյայով ու երգերով անհաղթահարելի ուժով ձգում էին նրան: Հետևաբար Աբովյանը Մննդյան տոներին նախ ճանապարհորդում է Երևանի գավառի քրդերով ու եզիդիներով բնակեցված վայրերում, թարմացնում իր տպավորությունները, գտնում նոր ծանոթներ ու բարեկամներ, իսկ այնուհետև, 1845 թ. վերջերից մինչև հաջորդ տարվա գարուն (ու մասամբ հետո էլ) ինքնամոռաց լարվածությամբ աշխատելով՝ գլուխ է բերում գերմաներեն լեզվով շարադրված այդ ընդարձակ ուսումնասիրությունը, սևագրելուց հետո մեն-մենակ արտագրում երկու (թե՞ երեք) օրինակ, պատրաստում նաև երկու համառոտ տարբերակ և ուղարկում՝ մեկը Գերմանիա, Մյունխենի համալսարանի պրոֆեսոր Մորից Վագներին, երկրորդը՝ Կովկասի բարձրագույն իշխանություններին, ըստ պատկանելույն հասցնելու համար, երրորդը՝ «Кавказ» լրագրին, վերջապես՝ մի համառոտ տարբերակ էլ, ավելի ուշ, հանձնում ռուս գրող ու ճանապարհորդ Անդրեյ Մուրավյովին[48]:

Աբովյանն ամբողջությամբ կլանված էր այս գործերով, երբ լուր առավ մայիսի սկզբներին Ներսես Աշտարակեցու՝ Երևան ու Էջմիածին ուղևորվելու վերաբերյալ: Պետք էր ըստ արժանվույն դիմավորել նրան և պատրաստվել անձնական հանդիպման: Այս մասին, սակայն, հաջորդ անգամ:

---

48 «Քրդեր» և «Եզիդիներ» ազգագրական ուսումնասիրությունների բոլոր տարբերակները՝ հանդերձ հայերեն թարգմանություններով և մեր հանգամանալից ծանոթագրություններով տե՛ս Աբովյանի Երկերի լիակատար ժողովածուի VIII հատորում: